

ՄԻՆԱՍ ԵԱՆՏՐՉՃԻ, ՍԿԻԻՏԱՐՅԻ. — Ս. Յակոբի վանքին խաչկալները ոսկեզօծելու համար 1847 ին Պոլսէն Երուսաղէմ եկած էր. 1847 ին կը վախճանի Երուսաղէմի մէջ՝ Ս. Յակոբայ տաճարին Աւագ խորանի ոսկեզօծեալ խաչկալին յիշատակարաններէն մին կը վերաբերի Մինաս Ակիւտարցիին, սա վերատառութեամբ. «ոսկեզօծեցաւ ձեռամբ Իւսկիւտարցի Մինասին. 1847.»:

ՄԻՆԱՍ ԵՊՍ. ՊՈԼՍԵՑԻ. — Մբ. 1820 ին ՓԿԵ. կը մասնակցի Մայր եկեղեցիի օծման: Ճառանքի եւ մոռային. յետոյ գրասպան. Ս. Յակոբի վանքին մոմխանէին դիմացի սենեակը ունի յիշատակարան մը, որմէ կը հասկցուի թէ՛ 1823 ին Մինաս եպս. ինքը շինած է նոյն քարուկիր սենեակը ծաղկէ նկարներով իբր գրատուն. յիշատակարանը կը դնենք հոս նոյնութեամբ երեք մասերովը.

— «Պայծառագեղ ծաղկեայ նկարք. ամենուստեք քաջայարմարք, զորս ի սենեակ աստ գրքատան. վայելես դու ի տես ական. գերապայծառ Մինաս անուն, եպիսկոպոսըն բազմարդիւն. քաջ նկարել հոգացաւ զսոյն. ի յիշատակ իւրոյ հոգոյն.»

— «Ճարակ մտաց. է բան գրոց հոգեպարզե Ածաշունչ մտաց է բան, գրոց սրբոց վայելչահիւս զետ ծաղկայ փունջ է բան գրոց, սրբոց ոգման. սրբասիրաց սըրբութեան հունչ Ածաշունչ զետ ծաղկեալ փունջ սըրբութեան հունչ մշտամունջ»

— «Յերջանիկ աւուրս Պարքութեան տեառն Գաբրիէլի վեհին Սսբազան, այս վայելչակերտ սենեակ գրքատան, նորոգեալ ցուցաւ ի գոյն գեղազան. Մինաս վրդպտ ծնունդ բիւզանդեան. եւ եպիսկոպոս տեղոյս միաբան. ի վայելս անձին երբ էր գրքապահ. եւ յետոյ եղող Յիշատակարան:

ՌՄՂԲ» (=1823):

ՄԻՆԱՍ ԾԱԼԵԱՆ, ՊԱՐՏԻԶԱԿՑԻ. — Ծ. 1860 ին. նախ աշկազգ. վարժ.ին, յետոյ շրջանաւարտ Ամերիկեան Բոպերդ գուլճէն 1885 ին. ուսուցչական եւ տեսչական պաշտօններ վարած